


## ՆԱԳՈՐԴՈՒՄՆԵՐ

### Տ. ԱՐԱՐԱՏ ԲԶՆ. ԳՈՂՈՍՅԱՆ

Ս. Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան»  
մատենադարանի փնտրեն

### ՈՍԿԱՆՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ 350 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

 Ուտենբերգյան գյուտից եւ հայ գրատպութեան սկզբնավորումից ի վեր հայերեն Ս. Գրքի տպագրութեանն ուղղված մեկուկեսդարյա ջանքերը 1666 թ. վերջապես պսակվեցին հաջողությամբ՝ Սահակ-Մեսրոպյան դպրոցի ոգին կրող արժանի մի նոր փաղանգի՝ Հակոբ Դ. Զուղայեցի Կաթողիկոսի, Մատթեոս սարկավազ Ծարեցու, Ավետիս Ղլիճենցի, Կարապետ վրդ. Անդրիանացու, Ոսկան վրդ. Երեւանցու եւ այլ երախտավորների ջանքերով: Նրանք գիտակցում էին, որ հայերեն Աստվածաշնչի հրատարակությունը սերտորեն կապված է հայուկեան հոգեմտավոր լուսավորութեան ու քաղաքական ազատութեան համար մղված պայքարին: Ոսկանյան Աստվածաշունչը նախադեպը չունեցող առաջինթաց էր նաեւ տպագրական-տեխնիկական տեսակետից, որով հայ գրատպությունը թեւակոխեց որակապէս նոր մի փուլ:

Դեռեւս 1966 թ., երբ լրացավ ոսկանյան Աստվածաշնչի 300 ամյակը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի կոնդակով տարին հռչակվեց հոբելյանական: Մայր Հայրենիքում, սակայն, այս կապակցությամբ մի քանի հրատարակումներից բացի՝ այլ իրադարձութիւններ տեղի չունեցան, ինչը չի կարելի ասել սփյուռքի մասին:



Սուրբ Գրքի տպագրության յոթելեանն այսօր առիթ է հաւատաւոր հայորդեաց համար՝ երախտագիտութեամբ խոնարհուելու հայ գրի բոլոր նուիրեալ մշակների պայծառ յիշատակի, նրանց անմահ գործի առջև  
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս)





Ոսկանյան Աստվաճաշնչի 350-ամյակին  
նվիրված միջազգային գիտաժողով  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



2016 թ., երբ լրացավ հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրություն 350-ամյակը, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական Սրբատառ կոնգրակով տարին հռչակեց հոբելյանական: Վեհափառ Հայրապետի տնօրինությունը Մայր Աթոռում ստեղծվեց համապատասխան հանձնաժողով, որը մշակեց միջոցառումների նախագիծ՝ նախատեսելով իրականացնել առանձին ուսումնասիրությունների հրապարակումներ, «Աստվածաշնչի դերը հայ ժողովրդի կյանքում» թեմայով բանախոսություններ, գիտաժողովներ:

Վերոնշյալ նախագծի շրջանակներում որոշվեց Ս. էջմիածնի Մատենադարանի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի համատեղ ջանքերով 2016 թ. հոկտեմբերի 6-8-ը Մայր Աթոռում հրավիրել միջազգային գիտաժողով «Հայերեն Սուրբ Գրքի թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հորիզոնում» խորագրով: Գիտաժողովի հանդիսավոր բացումը սկսվեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոբելյանական կոնգրակի ընթերցմամբ, ապա ողջունի խոսքով հանդես եկան կազմակերպիչ հաստատությունների ղեկավարները՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանը: Գիտաժողովի բացմանը ներկա էր նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ԵՊՀ եւ Ամերիկյան համալսարանի ռեկտորները, դեկաններ, անվանի գիտնականներ ու դասախոսներ:

Գիտաժողովի ընդլայնված նիստում ընթերցվեցին երեք զեկուլյցներ: Առաջին բանախոսի՝ Գ. Տեր-Վարդանյանի ելույթի հիմնական նյութը հայերեն Աստվածաշնչի՝ մեկ միասնական ձեռագրացուցակ պատրաստելու անցյալի փորձառությունն էլ ներկայիս անելիքների վերաբերյալ էր: Գիտնականը շեշտում էր, որ նախկին հետազոտությունների հիման վրա եւ ներկայիս գիտություն պահանջները հաշվի առնելով, պետք է աշխատանքներ սկսել՝ հնարավորինս լիակատար հայերեն Աստվածաշնչի ձեռագրացուցակ պատրաստելու համար:

Հաջորդ կարեւոր խնդրին անդրադարձավ Արմեն Մալխասյանն իր զեկուլյցմամբ, որը նվիրված էր հայերեն Աստվածաշնչի քննական բնագրի պատրաստման անհրաժեշտությունը եւ բնագրական սկզբունքներին: Հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության օրերից մինչ օրս ջանքեր են գործադրվում՝ կազմելու քննական բնագիր: Այս խնդիրներն առավել ցայտուն դարձան ԺԹ. եւ Ի. դարերի հայագետների եւ եկեղեցականների հետազոտություններում: Սակայն, ըստ հեղինակի, ձեռքբերումներն այս

ուղղութիւնով գոհացուցիչ չեն: Զեկուլցից հետո ծավալված բուռն քննարկումը ցույց տվեց, որ եթե քննական բնագրի պատրաստման անհրաժեշտութեան խնդրում մասնագետները միակարծիք են, ապա նույնը չի կարելի ասել վերջինիս իրականացման մեթոդների եւ սկզբունքների վերաբերյալ:

Նիստի երրորդ բանախոսը հայտնի հայագետ Քլոդ Քոքսն էր, ով հանդես եկավ հայերեն Ս. Գրքի թարգմանութեան բնագրային քննութեան գործում ոսկանյան Աստվածաշնչի հրատարակութեան նշանակութեանը նվիրված գեկուլցով:

Գիտաժողովի այլ մասնակիցներ անդրադարձան մի շարք աստվածաբանական, բնագրագիտական բնույթի կարեւոր եւ արդիական թեմաների: Ուշագրավ գեկուլցներով հանդես եկան էին Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը՝ «Մաքսիմիլիան Բոննեի՝ Գործք Հովհաննուի վերծանում», Նատիա Միրոտաձեն՝ «Եսթերի գիրքը հին թարգմանութեաններում. հունարեն բնագրից ժառանգած ընդհանրութեաններ հայերեն, վրացերեն եւ լատիներեն թարգմանութեաններում», Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը՝ «Իմաստութեան, Աստուծո հանդեպ երկյուղ, երջանկութեան. Սիրաքի գրքի աստվածաբանական ընթերցում», Սամուիլ Մնացականովը՝ «Արամիստիկան տալազրված Աստվածաշնչի առաջին հրատարակութեանները», Տ. Ներսես ավ. քհն. Ներսեսյանը՝ «1246 թ. թվագրվող Պողոսի թղթերի հայերեն մի ձեռագիր, որ Եփրեմ Զորագեղցին նվիրել է գնդ. Զոգեֆ Դ՝Արսիին 1829 թ. ապրիլի 4-ին», Փիթր Քաուլին՝ «Աստվածաշնչի հայերեն թարգմանութեան խմբագրութեան աստվածաբանական եւ հոգևորական խնդիրներ», Արամ Մարտիրոսյանը «Աստվածաշնչի մեջբերումներ «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ», Էռնա-Մանյա Շիրինյանը՝ «Ս. Գրքի իմաստի եռամասն (տրիստոմիկ) ընկալման՝ Որոգիների տեսութեանը եւ դրա արձագանքը հայկական աղբյուրներում», Տ. Հեթում քհն. Թարվերդյանը՝ «Աստվածաշնչի հայերեն թարգմանութեանը եւ ասորական ազդեցութեանը», Աննա Խառանաուլին, Նատիա Չանթլաձեն՝ «Սիրաքի գրքի վրացերեն եւ հայերեն թարգմանական զուգահեռներ. հունարեն մի կորած բնագրի մնացորդներ», Ալվարո Բարխուղարյանը «Նոր Կտակարանի անձնանունների հունարէն-գրաբար համարժեք ձեւերը», Նորայր Պողոսյանը՝ «Հատինաբանութեան հետքեր Ս. Գրքի որոշ հատվածների Ոսկանյան թարգմանութեան մեջ», Անահիտ Ավագյանը՝ «Ս. Աթանաս Ալեքսանդրացի եւ Ստեփանոս Սյունեցի. սուրբգրային վկայակոչումների թարգմանութեան վերլուծութեան», Օքսանա Կարապետյանը՝ «Պատմալեզվաբանական քննութեան՝ հայատառ դիֆչաղերեն աստվածաբանական բնագրերի (ըստ ՄՄ թ. 2267

ձեռագրի)», Նազենի Ղարիբյանը «Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ առկա ճարտարապետական բառերերի իմաստային եւ ձեւային նշանակության խնդիրը» խորագրերով:

Գիտաժողովի երրորդ նիստը տեղի ունեցավ Օշականում, որտեղ Սրբոց թարգմանչաց տոնին մատուցված Սուրբ եւ Անմահ Պատարագին մասնակցելուց հետո «Ս. Գրքի դերը հայերի կեանքում. պատմական ակնարկ» բանախստվածք գիտաժողովն ամփոփեց Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

